«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Սովորողների արժեքային համակարգի զարգացումը գրականության դասերին
ԱՌԱՐԿԱ	Գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Հայարփի Բաբայան
ՄԱՐԶ	Շիրակ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	<<Ձիթհանքովի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1 .ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

1.1 Արժեհամակարգ. նրա ձևավորման և զարգացման վրա ազդող գործոնները----------5

1.2 Հայրենասիրության դասերը Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպում ----------12

3. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2. «ԳԵՎՈՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ» ՎԵՊԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ / ԴԱՍԻ ՊԼԱՆ----------17

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------22

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------24

Ներածություն

Հետազոտական աշխատանքս կրում է «Սովորողների արժեքային համակարգի զարգացումը գրականության դասերին» վերնագիրը։ Թեման ընտրելիս հաշվի եմ առել թեմայի արդիականությունը՝ հայրենիքին արժանի բարոյական, ազգային և ավանդական արժեքներ կրող սերունդ ունենալու տեսանկյունից;

Թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենք կրթության բովանդակային բաղադրիչ։ Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը։ Իսկ մեր օրերում հատկապես հրատապ է սովորողի արժեքային համակարգի ձևավորման և զարգացման հարցը ազգային մշակույթի և ազգային արժեքների պահպանման համատեքստում։

21-րդ դարը հումանիզմի դրսևորման, տեխնիկական առաջընթացի, գիտական ուսումնասիրությունների, տեղեկատվության մեծ հոսքի և զարգացման մի դարաշրջան է, որտեղ ձևավորվում, դաստիարակվում և զարգանում է մերօրյա սերունդը։ Իսկ յուրաքանչյուր սերունդ ունի իր կատարելատիպը, ըստ որի էլ չափվում են արժեքներն ու նպատակները։ Սերունդներն օղակ են անցյալի ու ապագայի միջև և ապահովում են ինչպես տվյալ ժամանակաշրջանին բնորոշ արժեքների հաջորդականությունը, այնպես էլ՝ փոփոխումը։ Անձի ձևավորման, նրա սոցիալականացման գործընթացը պատմական տարբեր ժամանակներում տարբեր է եղել՝ պայմանավորված տարատեսակ հանգամանքներով և սկսած տվյալ ժամանակին բնորոշ պատմական իրադարձություններով ու ավարտած մարդկային մտածելակերպի բարդ և անկառավարելի փոփոխություններով։

Արդի մարտահրավերների պայմաններում պետականության ամրապնդման համար չափազանց կարևոր է ոչ միայն ժամանակակից, քաղաքական-տնտեսական և շուկայական հարաբերություններն ու օրենքներն ըմբռնող, այլև ազգային մտածողություն ու հայեցի

դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը: Այսօրինակ իրավիճակներում անփոխարինելի է դպրոցի դերակատարությունն ազգային-ավանդական արժեքների պահպանման, փոխանցման գործում, որի շնորհիվ ապահովվում են մտավոր ներուժով հարուստ սերունդ ունենալու, ազգային և համամարդկային մշակութային արժեքները պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու, կրթելու գործընթացը:

Աշխատանքի հիմնական նպատակն է ուսումնասիրել և նպաստել սովորողների արժեքային համակարգի զարգացմանը գրականության դասերին՝ շեշտը դնելով հայրենասիրության վրա:

Աշխատանքի հիմնական խնդիրներն են՝

1. Բացահայտել սովորողների արժեքային համակարգի զարգացման հիմնական ուղղությունները գրականության դասերին,

2.Բացահայտել՝ որոնք են արժեքային համակարգի զարգացման վրա ազդող գործոնները,

3. Բացահայտել սովորողների արժեքային համակարգի զարգացման արդյունավետությունն ապահովող ուղիները, մեթոդները գրականության դասերին.

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, հիմնական մասից, հետազոտական մասից, եզրակացությունից և գրականության ցանկից:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

1.1 Արժեհամակարգ. նրա ձևավորման և զարգացման վրա ազդող գործոնները

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա զարգացման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների զարգացման առումով չափազանց մեծ է հայոց լեզվի և գրականության դերը: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների

ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից» [10,էջ 22]: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի

վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է» [10, էջ 64]: Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների

վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հատկապես դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը:

Պատահական չէ արևմտահայ մանկավարժ Նիկողայոս Զորայանի մտահոգությունը, թե «ինչու համար դաստիարակութիւնը չի յաջողիլ ազգին մէջ, կամ ինչ ընելու է, որ ազգային դպրոցներն առաջ երթան» [3, էջ 65]: Եվ ինքն էլ պատասխանում է իր հարցադրմանը՝ առաջարկելով վերակառուցել դպրոցը՝ մոտեցնելով այն ազգային ակունքներին, բարձրացնելով հասարակության կենսամակարդակը և դպրոցները համալրելով մասնագիտական բարձր ունակություններ ունեցող մանկավարժ-դաստիարակներով: Հետևապես, ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:

Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է դասավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է

համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները: Իսկ անձի հոգեաշխարհի վրա ազդող և այն հարստացնող կարևորագույն գործոն է գրականությունը, որը բացահայտում է մարդու հոգևոր կյանքի հակասություններն ու ելևէջները, հույզերն ու զգացմունքները: Գրականությունը ունի ճանաչողական, հոգևոր-բարոյական մեծ արժեք, որը բնութագրում է նաև հոգևոր զարգացման չափանիշները: Այսինքն, գրականությունը հոգեկրթիչ դեր է կատարում մարդու կյանքում, հոգևոր ուղիներ բացում նրա համար ինքնակատարելագործվելու, հաղթահարելու դժվարությունները: [3, էջ 65]:

Փորձենք հասկանալ՝ ինչպե՞ս է ձևավորվում արժեքային համակարգը Գրականության դասերին:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Նախատեսվում է, որ գրականությունը յուրաքանչյուր դպրոցը ավարտողի մեջ պետք է ձևավորի՝

1.հայոց լեզուն և գրականությունը ճանաչելու, սիրելու, ուսումնասիրելու ձգտում, հայոց լեզվի և գրականության՝ որպես ազգային ինքնության գրավականի գնահատում

2. իր նախնիների հոգևոր մշակույթի գնահատում

3. գրական երկի ազդեցությամբ ինչպես ինքնաճանաչման, այնպես և դիմացինին հասկանալու, արժևորելու ձգտում, նրբանկատություն, նրբազգացություն, մարդկանց օգնության ձեռք մեկնելու պատրաստակամություն

4. համագործակցության կարողություն, հանդուրժողականություն, հարգանք ուրիշի տեսակետի նկատմամբ

5. անաչառ ինքնագնահատում, սեփական անջի, ինքնության գիտակցում և արժանապատիվ կեցվածք

6. ինքնադաստիարակության ձգտում՝ գրական երկում արծարծված հիմնական գաղափարին հաղորդակից լինելու, դրական օրինակներին հետևելու ճանապարհով

7.գրական-գեղարվեստական ճաշակ, գեղարվեստական խոսքով հաղորդվող հույզերի և զգացմունքների ընկալում:

Այսինքն՝ Գրականության դասավանդման հիմնական նպատակներից մեկը, բացի սովորողներին զուտ գրական երևույթներին ծանոթացնելուց, անհատի հոգևոր ու մտավոր զարգացմանը, անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի համար անհրաժեշտ է՝

1. գրական հերոսների օրինակով և գրական երկերի գաղափարագեղարվեստական հարստության օգտագործումով նրանց մեջ դաստիարակել մարդասիրական ոգի, բարոյական բարձր հատկություններ՝ բարություն, ընկերասիրություն, ազնվություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ

2. սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին։[6]

Գրականությունը «կրթության բովանդակության տիրույթ է, որն ապահովում է սեփական մտքերը հայերեն բանավոր և գրավոր գրագետ խոսքով արտահայտելու, ազատ հաղորդակցվելու, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով, հայ և արտասահմանյան գրականության ստեղծագործություններ, ինչպես նաև ուսումնական այլ առարկաներ ուսումնասիրելու կարողության, ինքնաճանաչողության, աշխարհաճանաչողության, լեզվամտածողության, քննադատական, հուզական-պատկերավոր մտածողության ձևավորումը, զարգացումը և կատարելագործումը ողջ կյանքի ընթացքում» [7]։

Կարող ենք եզրակացնել, որ Գրականության դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի, պետականամետ հայ քաղաքացու արժեքային համակարգի, նրա բարոյական նկարագրի ձևավորման գործում: Հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում մշակվում և ամրապնդվում է այն դիրքորոշումը, որ Մայրենի լեզուն՝ որպես ՀՀ պետական լեզու, անկախ պետականության պահպանման, զարգացման կարևորագույն երաշխիքն է, որը անփոխարինելի դեր ունի ինչպես հենց իր՝ սովորողի, այնպես էլ ողջ հայ ժողովրդի կյանքում: Սովորողը հայոց լեզվից, գրականությունից գիտելիք, որոշակի հմտություններ ձեռք բերելով հանդերձ՝ ուսումնասիրում է իր մայրենի լեզուն՝ որպես իր ինքնության բացահայտման և դրսևորման, որպես հաղորդակցման և համագործակցության, որպես այլ ոլորտներից գիտելիք ձեռք բերելու, օտար

լեզու սովորելու անփոխարինելի միջոց: Մայրենի լեզվի, գրականության ուսումնասիրությունը ձևավորում է որոշակի վերաբերմունք և դիրքորոշում հայեցի ոգու, ազգային արմատների պահպանման և ամրապնդման համար, ինչպես նաև հնարավորություն է տալիս խորությամբ ընկալելու հայ մարդու արժեքային համակարգը, ժողովրդի կենցաղը, նիստուկացը, հավատալիքները, ավանդույթները, սովորույթները: Ազգային ոգին և մշակույթը արժևորելու,գնահատելու, պահպանելու, հաջորդ սերնդին փոխանցելու պատրաստակամությամբ և գործուն մասնակցությամբ դաստիարակվում է հայրենասեր, պետական մտածողություն ունեցող, օրինապահ, բարեկիրթ, ներդաշնակ զարգացած անձնավորություն, որը պատրաստ է սովորելու ողջ կյանքի ընթացքում [11]:

1.2 Հայրենասիրության դասերը Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպում

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում ,այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը [1, էջ 112]:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է Հայ գրականության դասերի ժամանակ: Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջանն են անձի մոտ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրո զգացմունքն արմատավորելու և որպես հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար: Այս հարցն էլ ավելի սուր է ներկայանում մեր օրերում, քանզի այսօր ակներև է ավանդական հայրենասիրական գիտակցության մակարդակի նվազումը: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է

օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար։

Հայ գրականության դպրոցական ծրագրում ներառված, դեռահասի մեջ հայրենասիրական դաստիարակության արմատներ ձգող հայտնի հերոսներից է Գևորգ Մարզպետունին, որից կարելի է քաղել հայրենասիրություն և ոչ միայն։

«Գևորգ Մարզպետունի» վեպի ստեղծման շարժառիթը պատմաքաղաքական այն իրավիճակն էր, որում հայտնվել էր հայ ժողովուրդը 19-րդ դարի վերջին, երբ նրա արևելյան հատվածի գոյությանը սպառնում էր ռուսական ցարիզմի ազգաձուլման քաղաքականությունը, իսկ արևմտյան հատվածի գլխին կախված էր ֆիզիկական բնաջնջման վտանգը։ Իր վեպով Մուրացանն անմիջականորեն արձագանքում է Արևմտյան Հայաստանում 1895-1896թթ. սուլթան Համիդի կազմակերպած կոտորածներին։ «Գևորգ Մարզպետունին», որքան պատմական, այնքան էլ ժամանակակից վեպ է, քանի որ բարձրացնում է իր ապրած ժամանակի հուզող հրատապ խնդիրները. ի՞նչ դեր ունի անձնազոհ անհատը պատմության մեջ, ինչո՞վ է նպաստում առողջ, բարոյական հիմքերի վրա հաստատված ընտանիքը ազգի հզորացմանը, ազգի միասնության, ամբողջականության, հարատևման գործում կարևո՞ր է հավատի, եկեղեցու դերը, վերջապես ի՞նչ դասեր կարելի է քաղել պատմությունից ներկայի և ապագայի համար [9, էջ 198]։

Պատմավեպում նկարագրվում է հայ ժողովրդի վերջին հաղթական կռիվները արաբական զավիչների դեմ։ Աշոտ Երկաթի իշխանության ամենադժվար ժամանակ, երբ արաբները պատրաստվում էին վերջին հարվածը տալ հայ պետականությանը, Գևորգ անունով մեկը քսանմեկ զինվորներով կռվում է արաբ զորավար Բեշիրի դեմ և հաղթանակ տանում։ Այս փոքրիկ փաստը, Մուրացանը դարձրել է վեպի հիմնաքար՝ ստեղծելով Գևորգ Մարզպետունու կերպարը։

«Գևորգ Մարզպետունի» վեպի հիմնական գաղափարը հայրենասիրությունն է։ Պատմական Հայաստանի բնաշխարհի, հուշարձանների, ազգային ծեսերի ու արարողությունների նկարագրություններում, պատմական իրադարձություններից հատուկ նպատակով ընտրված դրվագներում, գործող հերոսների վարքագծում ու արարքներում, հեղինակային խոսքում, ամենուրեք զգացվում է այդ գաղափարի շունչը։ Դա պատմության գլխավոր դասն է, որ գրողն ուզում է փոխանցել ժամանակակից ու գալիք սերունդներին [9, էջ 200-201]։

Մարզպետունին ազնիվ էր, առաքինի, վեհանձն՝ նա դավանում է մարդկային արժեքներից բարձրագույնը՝ հայրենասիրությունը, որ ինքն անվանում է «անձնականը ընդհանուրին զոհելու քաջություն»: Ամենքը, անձնական կրքերի մոլորությամբ կուրացած, անփույթ էին այն խորհրդին, թե անձնական վշտերց ավելի հայրենիքն է մատնված կործանման աղետին: Մի «անհանգիստ մարդ էր միայն չափում երկիրը, հաշտություն հորդորում մարդկանց, խաղաղում կրքեր, փորձում կանխել վերահաս աղետը»[8, էջ 306]:

Մարզպետունին համարում էր, որ իսկական մարդը պետք է լինի հայրենիքի ծառան և զինվորը և չէր խնայում անգամ իր որդուն՝ Գոռին: Գոռը հոր պահանջով 20 քաջերի հետ մեկնում է Բեշիրի բանակի դեմ մարտնչելու, մտածելով, որ իր որդին որևէ մեկից առավել չէ և որ նրանք էլ ունեն մայրեր.«Իմ Գոռը հավիտյան հո չի ապրելու, մահը վաղ թե ուշ պիտի փակե նրա աչքերը. կարող է պատահի, որ նա մեռնի հենց իմ հարկի տակ, մի ապերախտ դավաճանի թաքուն հարվածից: Ինչու՞ ուրեմն չկամենալ, որ այդ մահը հանդիպե նրան հայրենիքի համար մղված կռվի դաշտում, ինչո՞ւ չցանկանալ, որ անփառունակ մահվան փոխարեն՝ նա մարտիրոսական պսակը ստանա, ինչո՞ւ չմխիթարվել այն քաղցր մտքով, թե աշխարհի մեջ ունեցածս ամենաթանկագին հարստությունը իմ հայրենիքի ազատության նվիրեցի»[8, էջ 276]:

Մուրացանը Գևորգ Մարզպետունու կերպարը ներկայացնելիս հիմքը դրել է ընտանիքի վրա: Վեպի տարբեր մասերում մենք հանդիպում ենք Գևորգ Մարզետունու կողմից հնչած, ներկայումս թևավոր խոսքերի վերածված արտահայտություններ, որոնցում նա կարևորում է ընտանիքի մասնակցությունը նրանից դուրս եկած զավակի հայրենասիրական դաստիարակության գործում: Մարզպետունին ամուր ընտանիքը համարում էր ազգի գոյության հիմքը, երկրի շահը առավել բարձր էր դասում, քան անձնական երջանկությունը, հաճույքներից, սիրուց և բարեկամությունից: Գևորգ Մարզպետունին ընտանիքը համարում է ազգի հիմքը. «Զորավոր է այն ազգը, որն ունի զորավոր ընտանիքներ…» [8, էջ 434] : Այս մեծ փիլիսոփայությունը գալիս է անձնական ապրումներից և անձնական դժբախտություններից. իր կորցրածն արժևորում է և բարձրացնում ազգային չափանիշների մակարդակին: Անձնական, անհատական փիլիսոփայությունը վերաճում է ազգայինի, պատմաքաղաքականի:

Ինքը՝ Մարզպետունին, ընտանիքը համարելով կայուն պետության հիմնաքար, ուխտ էր արել չվերադառնալ ընտանիքի գիրկը, քանի դեռ վերջին հագարացին չի հալածվել հայրենիքի

սահմաններից: Կարևորվում է նաև այն, որ լինելով բիրտ թշնամիների հանդեպ, Մարզպետունին նրանցից էապես տարբերվում է իր վեհանձնությամբ և անխարդախ հոգով: Մարզպետունին օժտված է հերոսական գծերով, ունի հզոր բնավորություն:

Մարզպետունու կերպարը հայրենասիրական դաստիարակության մեջ կարևորվում է այն փաստով, որ օժտված լինելով անհատական յուրահատուկ գծերով՝ նա զգում և անձնապես կարեկցում էր Ցլիկ Ամրամին և Սևադային, բայց հայրենիքի շահը ստիպում է նրան սթափ հայացքով նայել իրադարձությունների զարգացմանը: Մարզպետունին քաջ գիտակցում է նաև Աշոտ Երկաթի սիրո ողբերգությունը, սակայն չի կարողանում ներել նրան, քանի որ Աշոտի և իր նմանների կրքով կուրացած վարքը կործանում է երկիրը, տառապանք է բերում ժողովրդին:

«Մի ծաղկով գարուն կգա» և «Մի ձեռքը ծափ կտա» արտահայտությունները, որոնք շահարկման առարկա են դարձել, Մուրացանը դրել է «Գևորգ Մարզպետունի» վեպի հիմքում: Մուրացանը, ինչպես ոչ ոք, կարողացել է ճիշտ հասկանալ իր ժամանակի հայ հասարակության ամենաառաջնային խնդիրը՝ ազատագրական պայքարի կարևորությունը, ազատ հայրենիք ունենալու անհրաժեշտությունը, և փորձել է ելք գտնել դրան հասնելու համար: Նա ելքը տեսել է հարցերը սեփական ուժերով լուծելու մեջ՝ հայրենասեր ու մարդասեր անհատների օգնությամբ, ովքեր ի հայտ են գալիս ազգերի մեջ այն ժամանակ, երբ ազգը նրանց կարիքը ունի ու միավորում են մեկ ընդհանուր գաղափարի ներքո: Մուրացանը շատ լավ գիտեր, որ ուժեղ ցանկության դեպքում անհնարն էլ կարող է դառնալ հնարավոր, և վերջապես գրականությունը մարդասիրական ուղղվածություն ունի, նպատակը մարդկանց սրտերում հույս , հավատ, սեր սերմանելն է: Ինչ վերաբերում է մի ձեռքի ծափ տալուն, ապա, այո, մի ձեռքը ծափ չի տա, բայց եթե հավատով պարզվի, ինչ որ մեկը նրան ընդառաջ կուղարկի իր ձեռքը, ապա անհնարին թվացող ծափը կարող է իրականություն դառնալ: Այս խոսքերը նշանակում են հավատ իր ազգի ու մարդու հանդեպ [5, էջ 31-32]:

Կարևորվում է նաև Գևորգ Մարզպետունու մահվան պահի նկարագրությունը: Մահից հետո էլ նա ցանկանում է օգտակար լինել հայրենիքին: Մեջբերում եմ նրա խոսքերը՝ «Ամփոփիր ինձ Միջնաբերդի առաջ, ժայռերի բարձրության վրա, որտեղից կարողանամ հսկել Աշոտ Բռնավորի շիրիմին» [8, էջ 435-436]: Մարզպետունին փիլիսոփայական հաշտությամբ վերլուծում է կյանքի ու գոյության խորհուրդը՝ սերունդներին կտակելով մարդկային առաքինությունը կազմավորող երեք

պատգամ, որոնք խորհրդանշում են հայրենիքի հզորության հիմունքը՝ Անձնազոհություն, Միություն, Ընտանիք։

Մուրացանն իր գրականությամբ պետություն կառուցելու մոդել էր առաջարկում, երբ պետության կառուցման հիմքում դնում էր ամուր ընտանիքը, բարոյական արժեքները, համախմբվածությունը։ Ըստ գրողի՝ պետությունը պետք է հիմնված լինի բարոյական արժեքների վրա։ Գևորգ Մարզպետունուն գրողը օժտել է բացառիկ առաքելությամբ, ով գիտի՝ ինչ է պետությունը, ինչպես կառուցել։

Մուրացանի իդեալ հերոսը բարոյական անձն է՝ ազգային գոյության հիմունքի՝ «բարոյական հարստության» կրողը։ Այստեղ է Մուրացանի ստեղծագործության համամարդկային արժեքը [2, էջ 218]։

Վերոնշյալ բոլոր արժանիքների շնորհիվ «Գևորգ Մարզպետունի» վեպը ոչ միայն իր ուրույն տեղն է գրավում հայ գրականության լավագույն երկերի շարքում, այլև դպրոցական ծրագրում լայնորեն օգտագործվում է սովորողների հայրենասիրական դաստիարակության գործում։

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2. «Գևորգ Մարզպետունի» վեպի ուսուցումը 10-րդ դասարանում

Դասի պլան

Ցանկացած ժամանակաշրջան պատկերացնելու համար պետք է ուսումնասիրել գրականությունը, որը կարող է ավելի լավ պատկերացում տալ, թե ինչ քաղաքական իրավիճակ է տիրել, իսկ Մուրացանը դարաշրջանի իրադարձությունների, դեպքերի ու դեմքերի միանգամայն ինքնատիպ մեկնաբանությամբ հայոց պատմության էջերն է բացել:

Ուսուցիչը բաց հարցերի միջոցով աշակերտների օգնությամբ կճշգրտի պատմավեպի կապը մեր օրերի հետ, Արցախյան գոյապայքարի հետ և կառաջադրի այն մեծ նպատակը, որի համար մեր ժողովրդից պահանջվում է միասնություն և զգոնություն. այն է՝ երբեք չնահանջել մեր իրավունքները պաշտպանելիս՝ հանուն միասնական հզոր Հայաստանի: Այս առումով «Գևորգ Մարզպետունին», պատմական լինելով հանդերձ, ունի արդիական մեծ հնչեղություն:

Մուրացանը ևս այդպես էր տեսնում պատմության ուսումնասիրության նպատակը: Պատմությունն այնպես պետք է ներկայացնել, ասում է գրողը, որ հնարավոր լինի ցույց տալ «ներկայի համար նրանից օգտվելու ճանապարհը»:

Գրականության դասագործընթացում հետաքրքիր քննարկման նյութ են դառնում Աշոտ Երկաթ արքա և Աշոտ Երկաթ մարդ դիտարկումները: Երեխաները բավական գործուն քննարկում են ծավալում՝ մի կողմը մյուսին չզիջելով: Բախվում են կարծիքներ, և ուսուցչի օգնությամբ փորձում են հանգել ճիշտ եզրահանգման: Աշոտ Երկաթի կերպարն ուսումնասիրելիս չի կարելի շրջանցել Սահականույշի և Ասպրամի կերպարները, որոնք իրենց կանացիությամբ, խելամտությամբ ու վեհությամբ լրացնում են մեկը մյուսին, չնայած Ասպրամը ոչ մի դրվագում չի երևում: Նույն ակտիվ քննարկումն է ծավալվում Սահականույշի կերպարի շուրջ՝ որպես խորը վիրավորված կանացի ինքնասիրության և թագուհու արժանավայել պահվածք կրողի: Արդյոք այստեղ նույնպես չե՞նք տեսնում Մուրացանին, որ, ամուսնական դավաճանությունից խոցված, փորձել է իրեն պահել արժանավայել ու հպարտ:

Եկեղեցու գործունեությունը ազգային մշակույթի զարգացման տեսակետից նշանակալից է: Ուստի Մուրացանը, ծաղրելով անարժան հոգևորականներին, ուրույն սիրով է գովաբանում արժանիներին.լավ հոգևորականը պետք է իր անձը զոհի իր հոտի համար: Իսկ ժողովուրդը պարտավոր է սիրել և փայփայել իր եկեղեցին՝ նրա մեջ օրինակելիների մուտքն ազատ պահելով: Ըստ հեղինակի՝ ժողովրդի և հոգևորականության միջև անջրպետ չպիտի լինի, այլ փոխադարձ սեր ու հարգանք: Այս առումով «Գևորգ Մարզպետունի» վեպում կարևոր դեր է գրավում կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցու կերպարը: Հոգևոր առաջնորդը, ինչպես և աշխարհիկ առաջնորդը՝ թագավորը, պետք է վեր կանգնեն սովորական մարդուն հատուկ թուլություններից:

Վեպի գլխավոր գաղափարական կերպարը Գևորգ Մարզպետունին է, որը Մուրացանի ռոմանտիկական պատմափիլիսոփայության ընդհանրացումն է: Չլինելով պատմության գերին, այլ գեղարվեստական արտացոլող՝ Մուրացանը կարողացել է կերտել բացառիկ պատմական մի կերպար, որն իր խոսքով և գործով դաստիարակիչ մեծ ազդեցություն է թողնում ոչ միայն հայրենասիրական առումով, այլև բարոյական, ընտանեկան, անհատական, փիլիսոփայական ընկալումներով [4, էջ 195-197]:

Օրվա դասի պլան

Դասի թեման՝ «Գևորգ Մարզպետունի» վեպի հերոսները, 2 դասաժամ :

Նպատակները ՝ 1. ակադեմիական

խորացնել և ընդլայնել հայրենիքի, հայրենի հողի և հայրենասիրության մասին ունեցած պատկերացումները

գիտակցել ընտանիքի կարևորությունը

արժևորել սեփական բնօրրանում խաղաղ ապրելը և արարելը

կարողանալ բնութագրել հերոսներին

կազմել բանավոր և գրավոր խոսք

2. սոցիալական

խմբում աշխատելու կարողության զարգացում

ստեղծագործական մտածողության զարգացում

մտածողության զարգացում

ինքնուրույն որոնելու կարողության զարգացում:

:

Վերջնարդյունքները՝

1. կարողանալ կարդալ՝ ընկալելով կարդացածի ենթատեքստը,
2. գիտակցել հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանական բացահայտողի դերը,
3. զարգացնել հայրենասիրություն։

Մեթոդները՝ զրույց, բանավեճ, խմբային աշխատանք, միջառարկայական կապ (պատմություն, աշխարհագրություն) և այլն։

Անհրաժեշտ պարագաներ ՝ Սևանա լիճը պատկերող նկարներ, դասագիրք, գրականության տետրեր, նկարներ՝ հնագույն զենքերի տարբեր տեսակներով, քարտեզ (տասներորդ դարը պատկերող քարտեզը՝ իր հարևան երկրներով, որի վրա ցույց կտան պատմական-աշխարհագրական տեղանքները, որոնք կան պատմավեպում (Սևանա լիճ, Գառնի, Դվին և այլն)։ «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը, գրատախտակ, պրոյեկտոր, համակարգիչ։

Դասի ընթացքը՝ ԽԻԿ

Դասը կսկսենք զրույցով։ Աշակերտների հետ «կճանապարհորդենք» դեպի մեր պատմական անցյալը, կհասնենք Ավարայրի դաշտ, ապա կհասնենք մեր օրերը՝ Արցախյան հերոսամարտ, Ապրիլյան քառօրյա պատերազմ, նաև 44-օրյա պատերազմ։ Կխոսենք իրական հերոսների մասին, որոնցից շատերը դեռ կենդանի են, բայց Խաչատուր Աբովյանին հատուկ մոտեցումով կընտրենք մեռածներին՝ հիշատակելով շատերին, ինչպես Վարդան Մամիկոնյանը, Գևորգ Մարզպետունին, Մխիթար Սպարապետը, Անդրանիկը, Մոնթեն, Ապրիլյան պատերազմից՝ Ռոբերտ Աբաջյանը, 44-օրյա պատերազմից՝ Ալբերտ Հովհաննիսյանը և այլք։ Մուրացանի հերոսները՝ Գևորգ Մարզպետունի, Աշոտ Երկաթ, Սահակ Սևադա, Ցլիկ Ամրամ, Գոռ, իրենց մեջ մարմնավորում են ազգային բնավորության էական գծերը՝ հայրենապաշտություն, ազնվություն, ոգեղենություն, պատվախնդրություն, միաբանություն, անձնականը հայրենյաց շահին զոհելու պատրաստակամություն, որակներ, որ այսօր էլ դրսևորվում են սահմանին կանգնած զինվորների մեջ։ Մուրացանի հերոսները մասնակցում են մարդու կերտմանը, աշխարհայացքի ձևավորմանը, նրանց անձնազոհությունը փոխանցվում է դարեդար։ Թե երեկվա, թե այսօրվա հերոսներն իրենց

մեջ կրում են ազգային բնավորության առանձնահատկությունները։ Առաջնորդվելով հայրենիքի հանդեպ պարտքի ու սեփական պատվի բարձր գիտակցությամբ, նրանք գնում են աննախադեպ խիզախման։ Նրանց գերագույն նպատակը հայրենիքի փրկությունն է, որի համար գնում են ինքնազոհողության՝ ամբողջացնելով ազգի դիմագիծը։

Այդ պատճառով **խթանման փուլում** կկատարենք խմբային աշխատանք՝ աշխատանք բնագրի վրա, որի նպատակը կլինի բացահայտել, նորովի արժևորել հերոսներին։ Յուրաքանչյուր խումբ կստանա առաջադրանք. կստանան թերթիկներ հարցադրումներով կերպարի ամբողջական նկարագրման համար։

Դասարանը կբաժանվի 4 խմբի.

1. **«Գևորգ Մարզպետունի»**
   1. քաղաքական գործիչը և հայրը,
   2. փիլիսոփա մտածողը և հմուտ զորավարը,
   3. անձնվեր հայրենասերը։
2. **«Աշոտ Երկաթ»**
   1. անհատը և պետությունը,
   2.զգացմո՞ւնք, թե՞ բանականություն,
   3.ինչպե՞ս կվարվեինք մենք ։

3.**«Սահակ Սևադա և Ցլիկ Ամրամ»**
   1. կույր աչքը կների, բայց կույր սիրտը չի ների,
   2. մեղադրի՛ր կամ արդարացրու՛,
   3. անձնական վիրավորա՞նք, թե՞ հայրենիքի շահ։

4. **«Սահականույշ և Ասպրամ»**
   1. Սահականույշը կին և թագուհի,
   2. արդյոք հե՞շտ էր ներել ամուսնուն,
   3. մեղավո՞ր էր Ասպրամը, ինչու՞։

5.**«Հովհաննես կաթողիկոս»**
   1.հոգևոր հովիվը և նրա դերը,
   2. ինչպե՞ս կուզեիր տեսնել հոգևոր առաջնորդին,

3. ինչու՞ է Մուրացանը այդպիսին դարձրել նրան։

Իմաստի ընկալման փուլում կհանձնարարվի գծապատկերով ցույց տալ հերոսների կապվածությունը մեկը մյուսի հետ: Ավարտելուց հետո՝ 2-րդ դասաժամին, յուրաքանչյուր խումբ կներկայացնի իր աշխատանքը՝ վեպից մեջբերելով համապատասխան հատվածներ: Իսկ մնացած խմբերը հարցեր կնախապատրաստեն։

Կշռադատման փուլում կծավալվի բանավեճ՝ կապված կերպարների հոգեբանական տարբեր դրսևորումների հետ։

Գնահատում՝ փոխադարձ գնահատում։

Ամփոփում կկատարենք LearningApps ծրագրով։

https://learningapps.org/display?v=pwzpxi04n22

Տնային աշխատանք՝ գրել շարադրություն «Գևորգ Մարզպետունու կերպարը որպես Մուրացանի իդեալների անձնավորում» թեմայով։

Եզրակացություն

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա , որն անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը արժեքային համակարգի ձևավորման և զարգացման մասին է Գրականության դասերին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ Հայ գրականություն առարկան:

Հայ գրականության ծրագրի շրջանակներում սովորողների մոտ ձևավորվում է Հայոց լեզվի և Գրականության՝ որպես ազգային ինքնության գրավականի գնահատում, նախնիների հոգևոր մշակույթի գնահատում, ազգային արժանապատվության գիտակցում, համամարդկային մշակույթի մեջ իր արժանի տեղի ըմբռնում, գեղագիտական ճաշակի զարգացում և այլն: Հայ գրականություն առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդի համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի: Այդ իսկ պատճառով արժեքային համակարգի ձևավորումը և զարգացումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Արժեհամակարգի բուրգի գագաթին գտնվող արժեքը հայրենասիրությունն է, իսկ հայրենասիրություն դաստիարակելու համար լավագույն ստեղծագործություններից է Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը: 10-րդ դասարանում «Գևորգ Մարզպետունի» թեմայի ուսումնասիրման նպատակը հայրենիքի, ազգի և հավատի նվիրվածության դաստիարակումն է աշակերտների մեջ, ինչպես նաև սովորողներին մղել ինքնուրույն որոնողական աշխատանքի և զարգացնել նրանց ինքնուրույն մտածողությունը:

Վեպի գլխավոր գաղափարական կերպար Գևորգ Մարզպետունին բացառիկ պատմական մի կերպար է, որն իր խոսքով և գործով դաստիարակիչ մեծ ազդեցություն է թողնում ոչ միայն

հայրենասիրական առումով, այլև բարոյական, ընտանեկան, անհատական, փիլիսոփայական ընկալումներով:

Արժեքային համակարգի զարգացումը, հատկապես հայրենասիրության զարգացումը, արդիական է, որովհետև դեռ շարունակվում է հայի կռիվը իր ինքնապահպանման ու ինքնահաստատման համար, իսկ պատմական հիշողությունը, անցյալի հերոսական դրվագները ապագա սերնդին պիտի մղեն քաջության, մարտունակության ու հայրենասիրության:

Գրականության ցանկ

1. Բաբանսկի Յու. Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում//: Երևան: 1987: 254 էջ:

2 . Բախրինյան Հ., Սարինյան Ս. Հայ գրականություն// Հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք:Երևան: 2014: 240 էջ:

3. Գևորգյան Ա. Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում// : Երևան: 2002:176 էջ:

4.Դավթյան Օ. Հայագիտական հանդես N4(38)//: Երևան: 2017: 191-198էջ

5. Եգանյան Ա.Պատմավեպի հիմնախնդիրներ. Հայոց լեզու և գրականություն// 2013: Թիվ 4 (91):

6. Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներ և ծրագրեր. Հայոց լեզու, Գրականություն: 23. 11. 2007թ. N1153-Ա/Ք հրաման:

7.Հանրակրթության պետական չափորոշիչ: 04.02.2021: Երևան: https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 –հասանելի է 13.08.2022

8.Մուրացան. «Գևորգ Մարզպետունի»//: Երևան: Լույս: 1982: 436էջ:

9.Ներսիսյան Վ., Մնացականյան Լ. Հայ գրականություն 10// Ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 10-րդ դասարանի դասագիրք:Երևան: 2009: 208 էջ:

10. Սուխոմլինսկի Վ. Ս. Սիրտս նվիրում եմ երեխաներին: Կոլեկտիվ դաստիարակելու մեթոդիկա //.Երևան: 1977: 317 էջ:

11. Փորձնական չափորոշիչ և ծրագրեր «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ գրականություն» առարկաների 1-12-րդ դասարաններ// https://escs.am/files/files/2021-05-06/1d10dc19d7adbb902d7a2ee54481cbc8.pdf: 30.04.2021թ. N08-Լ հրաման –հասանելի է 13.08.2022